

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԵԽՏՐԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑ ԿԱՅԻՐԵՈՒՄ

«Արտենի» լրագիրը հաղորդում է, որ Եգիպտոսի նախքին փոխարքայ Նուբար փաշայի որդի Պողոս փաշա Նուբարը իւր հաշուով Հայկական մի բարձրագոյն առևտրական Դպրոց է բացել Կայիրէում, որ միակ հաստատութիւնն է իւր տեսակի մէջ Եգիպտոսում։ Բացի հայ լեզուից, այստեղ պէտք է աւանդուեն արաբերէն, անգլիերէն և ֆրանսերէն լեզուներ, ինչպէս պարտաւորեցուցիչ առարկաներ։ Վարժարամնում պիտի ընդունուեն նաև օտարահպատակներ, որոնց համար հայերէն լեզուի ուսումը պարտաւորական չէ։ Ըստ կանոնադրութեան դպրոցական խորհրդի մշտական անդամ են հիմնադիրը և նորա որդիքը։ Բացի սորանից, խորհրդի համար որոշ ժամանակով ընտրում են Կայիրէի հայ առաջաւորներից առ նուազն չորս անդամ։ Հիմնադրի կարգադրութեամբ, հայ ուսանողների թւում, հայ-լուսաւորչականները պէտք է կազմեն երկու երրորդից ոչ պակաս, իսկ օտարազգիներ-ուսանողների ընդհանուր թուի մի քառորդից ոչ աւելի։ Թոշակաւոր և որդեգիր կարող են լինել միայն լուսաւորչեան, կաթոլիկ և բողոքական հայեր։ Հիմնադրի նպատակն է-այս դպրոցում խմբել ամեն կողմերի հայ պատանեկութիւնը, որի համար Եգիպտոսի կլիմայական պայմանները առանձնապէս նպաստաւոր են։ Պողոս փաշա Նուբարը ըստ մասնագիտութեան ճարտարապետ է, նա ճանապարհների հաղորդակցութեան և երկրագործութեան նախարար էր Եգիպտոսում։ Նա է գտել Եկեղեցական գութանը, որի համար առաջին մրցանակը ստացաւ Փարիզի աշխարհանդիսում էրսպէրտ-ների վկայութեան հետ, որ այս գութանը ամենից լաւ է Աֆրիկայում և Եւրոպայում գործադրուող գութանների մէջ։ Նա ամենից մեծ ոյժ և արտադրութեան զօրութիւն է պարունակում արտերը վարելու բամբակ ցանելու համար։